



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՐԱԿԵՆՏՐ



**ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ.
21-րդ դարի մարտահրավերներ
և հնարավորություններ**

**DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century**

**РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
ВЫЗОВЫ И ВОЗМОЖНОСТИ 21-ого века**

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ

ՀՊՏՀ ռեկտոր, Կ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

- ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ** - ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., դոցենտ
ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ - ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, Կ.գ.դ., պրոֆեսոր
ԽՈՐԵՆ ՄԻՆԻՔԱՐՅԱՆ - ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, Կ.գ.թ., դոցենտ
ԱՇՈՏ ՍԱԼԵԱԶԱՐՅԱՆ - ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ - ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., Կ.գ.դ., պրոֆեսոր
ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - ՀՊՏՀ պրոռեկտոր, Կ.գ.դ., պրոֆեսոր

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
Տ 778 հնարավորություններ: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ,
2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՛ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հեղափոխություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրապարակապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հեղափոխական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հեղափոխական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այսօրեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հեղափոխություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահեղափոխական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հեղափոխ գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մտադրում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

տում ակնհայտ է դառնում առանձին երկրի զարգացման միտումի հարաբերական կայունությունը: Միաժամանակ, ԵՄ շրջանակներում պահպանվում են էական տարբերությունները հարավի և հյուսիսի միջև: Ավելի զարգացած հյուսիսային երկրների տնտեսությունները հիմնված են բարդ տեխնոլոգիական ոլորտների մասնագիտացման վրա, այն դեպքում, երբ հարավային երկրների համար աշխատատար ավանդական ոլորտները շարունակում են մնալ մրցակցային առավելությունների հիմքը:

ВРАМ КАРАПЕТЯН

МЕЖДУНАРОДНЫЙ ОПЫТ РЕГИОНАЛЬНОГО РАЗДЕЛЕНИЯ ТРУДА

Ключевые слова: международное разделение труда, регион, особенности, специализация, Азиатско-Тихоокеанский регион, Европейский союз

Изменения в производственных системах, которые входят в сферу отдельных отраслей, создают предпосылки для фундаментального пересмотра отношений на региональном уровне. Для этого необходимо выявить особенности регионального разделения труда в рамках различных групп региональной интеграции.

VRAM KARAPETYAN

INTERNATIONAL EXPERIENCE OF REGIONAL DIVISION OF LABOR

Key words: international division of labor, region, features, specialization, Asia-Pacific region, European Union

Changes in production systems that fall within the scope of individual industries create the prerequisites for a fundamental outlook for relations at the regional level. To do this, it is necessary to identify the features of the regional division of labor within the various groups of regional integration.

ՎԵՐԳԻՆԵ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ

ԻՍՐԱՅԵԼԻ ԱԶԳԱՅԻՆ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հիմնաբառեր. նորարարություն, ազգային նորարարական համակարգ, գիտություն, վենչուրային հիմնադրամ, ստարտ-ափ, նորարարական մշակույթ, համաշխարհային տնտեսություն

Հողվածի նպատակն է ուսումնասիրել Իսրայելի ազգային նորարարական համակարգի ձևավորման և զարգացման հիմնական միտումները և կիրառել դրանք ՀՀ տնտեսությունում: Իսրայելը բավական արագ տեմպերով դարձել է նորարարական հսկա տարածաշրջանում և համաշխարհային տնտեսությունում: Իսրայելի նորարարական ֆիրմաների հաջողության մոդելը օրինակ է այն երկրների համար, որոնք փորձում են իրենց տնտեսությունը տանել այդ ճանապարհով:

Վստահ եմ, որ հայերն օժտված են նորարարական մտածողության անհրաժեշտ որակներով:

Յիգալ Էրլիխ

«Յոզմա Գրուպ» վենչուրային հիմնադրամի հիմնադիր

Իսրայելը բավական արագ տեմպերով դարձել է նորարարական հսկա տարածաշրջանում և համաշխարհային տնտեսությունում: Իսրայելի նորարարական ֆիրմաների հաջողության մոդելը օրինակ է այն երկրների համար, որոնք փորձում են իրենց տնտեսությունը տանել այդ ճանապարհով: Բնական և ֆինանսական սահմանափակ ռեսուրսներ ունեցող Իսրայելը, որը նաև անընդհատ ռազմական հակամարտությունների մեջ է հարևան երկրների հետ, ստիպված էր որոնել նոր ուղիներ տնտեսության զարգացման համար¹:

Բարձրակարգ մասնագետների առկայությունը և պետության վարած քաղաքականությունը՝ ուղղված օտարերկրյա ներդրումների ներգրավմանը, հանգեցրին իսկական վերելքի: Բարձր տեխնոլոգիաների և տնտեսական ձեռքբերումների հարցում կարևոր դեր խաղացին ռազմական արդյունաբերությունում իրականացված մշակումները:

Բարձր տեխնոլոգիաների ոլորտում Իսրայելի հիմնական գործընկերն ԱՄՆ-ն է, և զարմանալի չէ, որ արդյունաբերությունում ինովացիոն տեխնոլոգիաների ներդրման և գիտական հետազոտությունների ոլորտում երկկողմանի միջպետական համագործակցության հիմնական գործընկերը նույնպես նա է²:

1977 թ. հիմնվել է արդյունաբերության ոլորտում հետազոտությունների և մշակումների ամերիկա-իսրայելական միջպետական հիմնադրամը (Israel-U.S. Binational Industrial Research and Development Foundation - BIRDF), որի նպատակն է արտադրությունում տեխնիկական նորոյթների ներդրմանն օժանդակելու միջոցով նպաստել բարձր տեխնոլոգիաների բնագավառում ամերիկյան և իսրայելյան գիտնականների փոխշահավետ համագործակցությանը: Հիմնադրման օրվանից BIRDF-ը օժանդակել է 740 ծրագիր՝ ներդնելով 245 մլն դոլար:

1980-ական թթ. երկրորդ կեսին Իսրայելն համաշխարհային շուկայում ճանաչվեց իր գիտական նվաճումներով: ԱՄՆ-ի օգնությամբ Իսրայելը ձգտում էր գիտական կապեր հաստատել, փորձի փոխանակություն իրականացնել զարգացող երկրների հետ: Այդ նպատակով 1985 թ. ստեղծվեց զարգացման բնագավառում համատեղ հետազոտությունների ամերիկա-իսրայելական գիտահետազոտական ծրագիր: USAID-ն ամեն տարի այդ ծրագրի բյուջե է փոխանցում 3 մլն դոլար:

1993 թ. ստեղծվեց գիտության և տեխնոլոգիաների գծով ամերիկա-իսրայելական հանձնաժողով: Երկու կառավարությունները ներդրեցին 15-ական մլն դոլար: Նպատակը՝ օժանդակել երկու երկրներում բարձր տեխնոլոգիաների զարգացմանը համատեղ ծրագրերի իրագործման ճանապարհով, օժանդակել ռազմական տեխնոլոգիաները արդյու-

¹ Саймон Грайвер, Грани израельской экономики. www.posolstvo.narod.ru/hitech.html

² Հ. Մարության, Իսրայելի մրցունակությունը և գիտության դերը, Եր., 2009:

նաբերությունում ներդնելու գործընթացին: Հանձնաժողովը հիմնել է Գիտության և տեխնոլոգիաների ամերիկա-իսրայելական հիմնադրամ, որը պետք է վերաբաշխեր այն դրամաշնորհները, որոնք տրամադրվում էին երկու պետությունների կառավարությունների կողմից:

Իսրայելի ամերիկյան ուղղվածությունը բերեց նրան, որ Իսրայելը սկսեց պարզապես վերցնել ամերիկացի գործարարների և ներդրողների, ինչպես նաև ինովացիոն զարգացման ամերիկյան տնտեսության փորձը: Արդյունքում բարձր տեխնոլոգիաների բնագավառում այսօր Իսրայելը համարվում է համաշխարհային առաջատար և ձևավորել է երկրորդ «Սիլիկոնյան հովիտը»: Այն տեղակայված է Թել Ավիվից հյուսիս գտնվող արդյունաբերական գոտում, որտեղ գտնվում են բազմաթիվ խոշոր արևմտյան ընկերությունների՝ այդ թվում՝ Digital Equipment-ի, Motorola, Intel-ի՝ մասնաճյուղերը: 2005 թ. Բիլ Գեյթսը բնութագրել է Իսրայելը որպես «Սիլիկոնային հովիտ» մաս՝ այդպիսով ճանաչելով հրեական պետության արդյունաբերության ոլորտի հաջողությունները:

Միջազգային հարաբերությունների խորհրդի անդամ Դեն Սենորը և Jerusalem Post-ի հիմնադիր Սաուլ Սինգերը բացահայտել են ինովացիոն հաջողության որոշակի օրինաչափություններ «Ստարտ-ափ – ազգ» գրքում: Այսօր Իսրայելը վստահորեն անվանվում է ստարտ-ափերի երկիր: Իսրայելում ավելի շատ են ստարտ-ափ ընկերությունները, քան Ճապոնիայում, Չինաստանում, Հնդկաստանում և Կորեայում:

Այսօր Իսրայելում գործում են 4800 ստարտ-ափ՝ Apple-ը, Microsoft-ը և Intel-ը, որոնք իրենց առաջին մշակման կենտրոնները ստեղծել են հենց Իսրայելում:

Startup Genome-ի հետազոտությունների համաձայն՝ Թել Ավիվը զբաղեցնում է երկրորդ տեղն աշխարհում Սիլիկոնյան հովիտից հետո ստարտ-ափերի հագեցվածության մակարդակով: Իսկ ամենահինովացված երկրների վարկանշային սանդղակում, ըստ Bloomberg-ի, Իսրայելն առաջին հնգյակում է՝ առաջ անցնելով ԱՄՆ-ից և Մեծ Բրիտանիայից²: Վենչուրային շուկայի այսպիսի դրական դինամիկա Իսրայելը ցուցաբերել է վերջին 10 տարիների ընթացքում:

Իսրայելի ստարտ-ափ-էկոհամակարգը ստացել է բարձր գնահատական Compass վերլուծական ընկերության հետազոտություններում: 2015 թվականին Թել Ավիվը գրավել է 5-րդ տեղը զլոբալ ստարտ-ափ վարկանշով՝ Սիլիկոնյան հովիտից, Նյու Յորքից, Լոս Անջելեսից և Բոստոնից հետո:

2015 թ. Իսրայելում գործում էր մոտ 1400 նոր ստարտ-ափ ընկերություն՝ ըստ Geektime-ի և Zirra-ի համատեղ հետազոտության³: IVC Research Center և KPMG ամենամյա զեկույցի համաձայն՝ ներգրավված կապիտալի ընդհանուր ծավալը 4.43 մլրդ դոլար է՝ ըստ 708 գործարքի:

Գործարքների միջին գումարը 2015 թ. կազմել է 6,3 մլն դոլար, 2014 թ. 5 մլն դոլար, իսկ վերջին 10 տարիների միջին ցուցանշով՝ 4 մլն դոլար:

¹ Israel – a Land of Tech Promise

² <https://piie.com/blogs/north-korea-witness-transformation/three-views-and-methodologies-global-innovation>

³ <http://itbusinessweek.com/israel-2015/>

Այս ամենից կարելի է եզրակացնել, որ Իսրայելում ստարտ-ափն է ընտրում ներդրողին, այլ ոչ թե հակառակը:

Իսրայելում առանձնահատուկ ուշադրություն են դարձնում ընտանեկան արժեքներին, փոխադարձ օգնությանն ու բարեգործությանը: Այնտեղ ստարտ-ափերից շատերը, իրենց գործունեությանը զուգահեռ, նաև ակտիվորեն ներկայացնում են սոցիալական պատասխանատվության իրենց սեփական ծրագիրը:

Շատերն Իսրայելը դիտարկում են որպես արևմտյան երկիր, սակայն չարժե մոռանալ, որ այն, այնուամենայնիվ, Մերձավոր Արևելք է: Իսկ դա նշանակում է, որ ինտեգրվել տեղական շուկային, հաշվի չառնելով արարողակարգերի ամբողջական համակարգը, բավական բարդ է:

Մոտակա 5 տարիներին Իսրայելի ստարտ-ափ շուկայում կնկատվեն հետևյալ միտումները.

1. կշարունակվի ներդրողների հոսքը Չինաստանից, Լատինական Ամերիկայից և Ռուսաստանից,

2. կշարունակվի ստարտ-ափերի զարգացման պետական աջակցության նոր ալիքը: Իսրայելում 1 մարդուն բաժին է ընկնում 2 անգամ ավելի շատ ներդրումային կապիտալ, քան ԱՄՆ-ում և 30 անգամ ավելի շատ՝ քան Եվրոպայում: Իսրայելը բարձրտեխնոլոգիական ընկերությունների կենտրոնացմամբ և ձեռնարկություններում կապիտալ ներդրումների ծավալով 2-րդ տեղում է աշխարհում ԱՄՆ-ից հետո:

Իսրայելը 1-ին տեղում է տեխնոլոգիական համալսարաններում սովորողների և մասնագետների քանակով: Ավելին, սովորողների մեծ մասը ներգրավված է ԳՀՓԿ՝ R&D (Research and Development) հատվածում՝ ազգային արտադրանքի արտադրության և զարգացման նպատակով: Այն աշխարհում երրորդ տեղն է զբաղեցնում ձեռնարկատիրության զարգացման մակարդակով և առաջին տեղը՝ այդ ոլորտում կանանց և 55 տարեկանից բարձր անձանց ներգրավվածությամբ: Իսրայելը առաջատար է անվտանգության, համակարգչային տեխնոլոգիաների, հաղորդակցության, ինչպես նաև բարձր տեխնոլոգիաների, բիոտեխնոլոգիաների և բժշկության ոլորտներում:

Իսրայելում պետությունը հզոր աջակցություն է ցուցաբերում նորարարության զարգացմանը: Անհատ ներդրողների համար մշակվել է Tnufa ծրագիրը, գործում են տեխնոպարկեր, տեխնոլոգիաների փոխանցման կենտրոններ, կառուցվել է Իսրայելի Ստանդարտների ինստիտուտը, գործում են ինժինիրինգային կենտրոններ: Կարևորվում է վենչուրային ֆինանսավորումը, որը հանդիսանում է ստարտ-ափերի ֆինանսավորման աղբյուրը: Այսօր զարգացող երկրների համար մարտահրավեր է հեռանկարային ռազմավարությունների առավելությունները միջազգայնացնելու ունակությունը, որոնք հաճախ ուշադրության չեն արժանանում կարճաժամկետ քաղաքական նկատառումների հետևանքով:

Վենչուրային հիմնադրամները ռիսկային են, որոնք ներդրումներ են կատարում նոր ստեղծվող ձեռնարկություններում: Ստարտ-ափերի 70-80%-ը, որոնցում ներդրում են կատարում վենչուրային հիմնադրամները, ձախողվում են, իսկ ներդրված գումարները՝ կորչում: Սակայն, այդ փաստը գիտակցում են նաև հիմնադրամները: Եվ նրանք աշխատում

են այն 20-30% ստարտ-ափերի վրա, որոնք հաջողության են հասնում և որոնց շնորհիվ աշխատած գումարները ծածկում են «անհաջող» ներդրումները:

Այն գործոնները, որոնք բարձր տեխնոլոգիաների համաշխարհային շուկայում Իսրայելին հնարավորություն են տալիս մրցակցային պայքարում առաջատար դիրքեր զբաղեցնելու, կառավարության արդյունավետ ներդրումային քաղաքականությունն է և մասնավոր ինովացիոն հիմնադրամները: Պետությունն իր վրա է վերցրել վենչուրային ընկերությունների նոր ծրագրերի ֆինանսավորման 50%-ը:

Իսրայելն առաջին տեղն է զբաղեցնում ՀՆԱ-ում՝ վենչուրային կապիտալի մասնաբաժնով, երկրորդ տեղն ԱՄՆ-ից հետո՝ վենչուրային ընկերությունների քանակով, որոնց թիվը գերազանցում է 4000-ը և երրորդ տեղը (ԱՄՆ-ից և Կանադայից հետո)՝ բարձր տեխնոլոգիաների ոլորտում մասնագիտացած ընկերությունների քանակով: Վենչուրային կապիտալ ներդրումների ծավալով Իսրայելը երրորդ տեղում է Կանադայից և Ֆրանսիայից հետո, չորրորդ տեղում է ԱՄՆ-ն, հինգերորդ տեղում՝ Ֆինլանդիան:

2015 թ. Իսրայելը զբաղեցրել է երկրորդ տեղը (ԱՄՆ-ից հետո) այն երկրների շարքում, որոնք նախընտրում են ներդրումներ կատարել վենչուրային հիմնադրամներում: Deloitte հետազոտությունը երկրներին գնահատել է հինգբալանոց սանդղակով¹: Առաջին տեղը զբաղեցրել է Միացյալ Նահանգները՝ 4.17, երկրորդն Իսրայելը՝ 3.90, այնուհետև Կանադան՝ 3.60, Չինաստանը՝ 3.53 և Մեծ Բրիտանիան՝ 3.51 բալով:

2015 թվականին 18 իսրայելական վենչուրային հիմնադրամները ներգրավել են 1,02 մլրդ դոլարի կապիտալ միջոցներ: Պետք է նշել, որ հիմնադրամների վերջնական փակման ժամանակ ներգրավված միջոցների ընդհանուր ծավալը կաճի ևս 500 մլն դոլարով: Այսօր իսրայելական վենչուրային հիմնադրամների միջին ծավալը, սկսած 2015 թվականից, կազմում է 57 մլն դոլար: Վերջնական նպատակին հասնելու համար հիմնադրամի կապիտալի միջին ծավալը պետք է կազմի 82 մլն դոլար²:

2016 թվականի վերջի դրությամբ, իսրայելական վենչուրային հիմնադրամները նախատեսել էին ավելի քան 2 մլրդ դոլար՝ ներդրումային գործընթացների համար: IVC և KPMG տվյալներով՝ 2016 թվականի ընթացքում վենչուրային ընկերությունները մոտ 700 մլն դոլար ներդրում են կատարել³:

1. Eucalyptus Growth Capital – 300 մլն ԱՄՆ դոլար,
2. USVP – 300 մլն ԱՄՆ դոլար,
3. Pitango – 250 մլն ԱՄՆ դոլար,
4. OrbiMed Israel - \$250 մլն ԱՄՆ դոլար,
5. Yozma – 200 մլն ԱՄՆ դոլար,
6. Viola Private Equity - 250 մլն ԱՄՆ դոլար,
7. 83North - 200 մլն ԱՄՆ դոլար,
8. Infocomm - 200 մլն ԱՄՆ դոլար,

¹ <https://www2.deloitte.com/global/en.html>

² <http://itbusinessweek.com/israel-2015/>

³ IVC Research Center-ի ամենամյա զեկույց:

9. PochHaHo & Tsinghua Holding - 160 մլն ԱՄՆ դոլար,

10. Glilot Capital Partners - 77 մլն ԱՄՆ դոլար, AltaIR Capital - 30 մլն ԱՄՆ դոլար:

Գլոբալ ինովացիոն ինդեքսի վարկանիշը (2017 թ.)¹

Երկիր/ Տնտեսություն	Հաշիվ (0-100)	Աստիճան	Եկամուտ	Աստիճան	Տարածա- շրջան	Աստիճան	Արդյունավե- րության հարաբերակ- ցություն	Աստիճան
Շվեյցարիա	67.69	1	HI	1	EUR	1	0.95	2
Շվեդիա	63.82	2	HI	2	EUR	2	0.83	12
Նիդեռլանդներ	63.36	3	HI	3	EUR	3	0.93	4
ԱՄՆ	61.40	4	HI	4	NAC	1	0.78	21
Միացյալ Թագավորություն	60.89	5	HI	5	EUR	4	0.78	20
Դանիա	58.70	6	HI	6	EUR	5	0.71	34
Սինգապուր	58.69	7	HI	7	SEAO	1	0.62	63
Ֆինլանդիա	58.49	8	HI	8	EUR	6	0.70	37
Գերմանիա	58.39	9	HI	9	EUR	7	0.84	7
Իռլանդիա	58.13	10	HI	10	EUR	8	0.85	6
Կորեա	57.70	11	HI	11	SEAO	2	0.82	14
Լյուքսեմբուրգ	56.40	12	HI	12	EUR	9	0.97	1
Իսլանդիա	55.76	13	HI	13	EUR	10	0.86	5
Ճապոնիա	54.72	14	HI	14	SEAO	3	0.67	49
Ֆրանսիա	54.18	15	HI	15	EUR	11	0.71	35
Հոնկոնգ (Չինաստան)	53.88	16	HI	16	SEAO	4	0.61	73
Իսրայել	53.88	17	HI	17	NAWA	1	0.77	23
Կանադա	53.65	18	HI	18	NAC	2	0.64	59
Նորվեգիա	53.14	19	HI	19	EUR	12	0.66	51
Ավստրիա	53.10	20	HI	20	EUR	13	0.69	41
Նոր Զելանդիա	52.87	21	HI	21	SEAO	5	0.65	56
Չինաստան	52.54	22	UM	1	SEAO	6	0.94	3
Ավստրալիա	51.83	23	HI	22	SEAO	7	0.60	76
Չեխիա	50.98	24	HI	23	EUR	14	0.83	13
Էստոնիա	50.93	25	HI	24	EUR	15	0.79	19
Մալթա	50.60	26	HI	25	EUR	16	0.84	8
Բելգիա	49.85	27	HI	26	EUR	17	0.67	47
Իսպանիա	48.81	28	HI	27	EUR	18	0.70	36

Բիզնես ինկուբատորների և տեխնոպարկերի գործունեությունը Իսրայելում զարգացման որակապես նոր մակարդակի վրա է: Բիզնես ինկուբատորները գործում են Իսրայելի պետության և մասնավոր անձանց կողմից:

Այսօր Իսրայելում հաշվարկվում է 23 ինկուբատոր, որոնցից յուրաքանչյուրում գործում են միջինը 10 երիտասարդ ընկերություն, որից 55%-ը արդարացրել է կատարված

¹ www.wipo.int/edocs/.../en/wipo_pub_gii_2017-intro5.pdf

ներդրումները և շարունակել իր բիզնեսը:

Իսրայելյան Սիլիկոնյան հովիտն ունի բարձր տեխնոլոգիաների արտադրության մեծ համակենտրոնացում: Իսրայելական Սիլիկոնյան հովիտը երկրորդն է իր կարևորությամբ և զիջում է միայն ԱՄՆ-ին: Ձեռնարկությունների առավել բարձր համակենտրոնացում նկատվում է «Մեծ Թեյ Ավիվի» մոտակայքում՝ Հերցլիայից մինչև Ռիշոն Լիցիոն:

ՀՀ տնտեսության զարգացման գլխավոր նախապայմաններից մեկը ժամանակակից տեխնոլոգիաների հենքի վրա վերարտադրական ողջ համալիրի հետևողական արդիականացումն է: Քիչ թե շատ տևական հեռանկարում, առանց այդ խնդրի լուծման, փոքր տարածք, սակավ բնական պաշարներ ու էներգակիրներ ունեցող երկրի համար զարգացման նման տարբերակն այլընտրանք չունի, քանզի առանց արդիական տեխնոլոգիաների անհնար կլինի դիմանալ տարածաշրջանային ուժեղ մրցակցությանը և բնակչության համար արդի քաղաքականության ձեռքբերումներին համահունչ կենսամակարդակ ապահովել: Կառավարության գործունեության ծրագրում գիտատար և բարձր տեխնոլոգիաների վրա հիմնված ոլորտը սահմանվել է որպես նախընտրելի գերակայություն:

ՀՀ-ն, գիտակցելով իր տնտեսության զարգացման սահմանափակ հնարավորությունները և բացահայտելով այլ երկրների գրավիչ օրինակները, 2000 թ. բռնեց գիտելիքահենք տնտեսության զարգացման ուղին՝ SS բնագավառի զարգացման հիմքով: SS ոլորտն այստեղ հիմնականում կախված է SS արտադրանքի և ծառայությունների աուբսորսինգի հնարավորություններից և էականորեն չի նպաստում երկրի տնտեսական զարգացմանը: Այս առումով, Իսրայելը որպես մոդել ընտրելը պատահական չէ:

Տեխնոլոգիաների ոլորտի փորձն է ներկայացնում Իսրայելի առաջատար վենչուրային ընկերության՝ Յոզմա Գրուպի հիմնադիր և կառավարիչ Յիգալ Էրլիխը: Ըստ նրա՝ Հայաստանն ունի իրատեսական հնարավորություններ նորարարական երկիր դառնալու համար: Նա կարծում է, որ յուրաքանչյուր երկիր, այդ թվում՝ Հայաստանը, որը ցանկանում է գնալ նորարարությունների զարգացման ուղով, պետք է հետևի մի քանի նախապայմանների, որոնք միայն կնպաստեն երկրի այդ ոլորտի զարգացմանն ու նորարարական գիտելիքի հարստացմանը: Այդ նախապայմաններն են.

- պետք է ունենալ գործարարության և նորարարության խառնուրդ,
- պետք է ունենալ ձեռնարկատիրական մշակույթ,
- խնդիրը ոչ միայն ֆինանսավորումն է, այլև «խելացի» գումարները,
- պետք է օգտագործել արտերկրում բնակվող հայերի ներուժը,
- եթե ռիսկի չդիմեն, արդյունքի չեն կարող հասնել,
- նորարարության աղբյուր են համալսարանները,
- կարևոր է պետության դերակատարումը:

Ըստ Էրլիխի՝ արդեն 2018 թվականին Հայաստանը կարող է դասվել աշխարհի 20 ամենանորարար երկրների շարքը, եթե այսօրվանից երկրի կառավարությունն իր օրակարգում ներառի նորարարական զարգացման թիրախային ուղղությունները և հետագա գործողությունները:

ВЕРГИНЕ КИРАКОСЯН
НАЦИОНАЛЬНАЯ ИННОВАЦИОННАЯ СИСТЕМА ИЗРАИЛЯ

Ключевые слова: инновация, национальная инновационная система, наука, венчурный фонд, стартап, инновационная культура, мировая экономика

Цель статьи исследовать основные тенденции Израиля и использовать их в экономике РА. Израиль быстрыми темпами стал инновационным гигантом в регионе и в мировой экономике. Модель успеха инновационных фирм Израиля – пример для тех стран, которые стараются вести экономику тем же путем.

VERGINE KIRAKOSYAN
NATIONAL INNOVATIVE SYSTEM OF ISRAEL

Key words: innovation, national innovative system, science, venture fund, start-up, innovative culture, global economy

The main purpose of this article is to investigate the main development tendencies of national innovative system of Israel and used them in the economy of the RA. Israel quickly became an innovative giant in the region and in the global economy. The model of success of innovative firms is an example for those countries that try to conduct the economy in the same way.

ԴԱՎԻԹ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՊՏՀ

**ՄԻՋԱՂԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ.
ՄԻԱԲԵՎԵՌ, ԹԵ՛ ԲԱԶՄԱԲԵՎԵՌ ԱՇԽԱՐՀ**

Հիմնաբառեր. միջազգային ֆինանսական համակարգ, երկրորդային էֆեկտ, արժույթային փոխարժեք, պահուստային արժույթ

Գոյություն ունեն պարբերաշրջանային փոխկապվածության մի շարք ուղիներ («խոշորակներ»), որոնցից կարևորը գործում է էլ ավելի գլոբալացվող, խոշոր ու բարդ ֆինանսական շուկաների միջոցով: Միջազգային ֆինանսական (ոչ) համակարգի տարբեր թերություններն արտացոլում են գլոբալ անհավասարակշռությունները: Ճգնաժամերը կկրկնվեն նորից ու նորից, քանի դեռ չեն վերացվել այդ թերությունները: Այն մասնագետները, ովքեր կարծում են, որ զարգացող երկրներում երկրորդային ազդեցությունների դերը կարող է զգալի լինել, կախված զարգացած տնտեսություն ունեցող երկրներում տեղի ունեցող իրադարձություններից, տուժած երկրներին առաջարկում են ինքնապաշտպանության մի քանի եղանակներ, որոնք ներկայացված են սույն հոդվածում: